Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 5

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2025-2026 ուս. տարվա
գիտական խորհրդի առցանց հարցման նիստի

ք.Երևան 21 հունվարի 2026թ.

Ներկա էին (հարցմանը մասնակցել են)՝գիտխորհրդի 20 անդամներից 14–ը:

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դաղայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. **Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ. դոցենտ Հայարփի Սիմոնյանի ղեկավարությամբ իրականացվող 25SC-CNR-1D007 ծածկագրով «Թիոֆլավինանման կողմնային շղթաներով սինթետիկ ամինոթթուների ստացում և կիրառում» թեմայով Հայ-Իտալական դրամաշնորհի առաջին տարվա ընթացիկ հաշվետվության քննարկման և հաստատման հարցը:**
2. **Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ, կ.գ.թ. դոցենտ Անահիտ Հովհաննիսյանի՝ ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից Գ.00.07 «Միկրոբիոլոգիա. կենսատեխնոլոգիա» մասնագիտությամբ ատենախոսական աշխատանք ղեկավարելու թույլտվություն ստանալու հարցը:**
3. **Ընթացիկ հարցեր:**

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. **Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ. դոցենտ Հայարփի Սիմոնյանի ղեկավարությամբ իրականացվող 25SC-CNR-1D007 ծածկագրով «Թիոֆլավինանման կողմնային շղթաներով սինթետիկ ամինոթթուների ստացում և կիրառում» թեմայով Հայ-Իտալական դրամաշնորհի առաջին տարվա ընթացիկ հաշվետվության քննարկման և հաստատման հարցը:**

Լսեցին՝ գիտական խորհրդի քարտուղար, ք.գ.թ., դոցենտ Ա. Դաղայանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ Հայարփի Սիմոնյանի կողմից

ներկայացվել է ընթացիկ հաշվետվություն՝ 25SC-CNR-1D007 ծածկագրով «Թիոֆլավինանման կողմնային շղթաներով սինթետիկ ամինոթթուների ստացում և կիրառում» թեմայով Հայ-Իտալական դրամաշնորհի առաջին տարվա կատարված աշխատանքների վերաբերյալ: Համաձայն Հ. Սիմոնյանի կողմից ներկայացրած հաշվետվության՝ հաշվետու ժամանակահատվածի առաջին եռամսյակում թիոֆլավինանման սինթետիկ ամինոթթուների նախագծման համար Molecular Docking, HDOCK ծրագրաշարերի միջոցով իրականացվել է համակարգչային մոդելավորում: Արդյունքում նախագծվել են որոշ ամինոթթուներ, որոնք իրենց արոմատիկության և ստերիկ էֆֆեկտների շնորհիվ կարող են կրկնօրինակել թիոֆլավինի կառուցվածքային առանձնահատկությունները: Դրանցից երկուսը սինթեզվել են նախագծի երրորդ և չորրորդ եռամսյակներում: Երկրորդ եռամսյակում սինթեզվել են նպատակային ամինաթթուների սինթեզի համար անհրաժեշտ ելային քիրալային կոմպլեքսները:

Հետազոտության արդյունքները տպագրվել են Q1 կատեգորիայի ամսագրում (https://doi.org/10.1016/j.omtn.2025.102478):

Հաշվետու ժամանակահատվածի երկրորդ եռամսյակում ԵՊՀ է այցելել Իտալիայի գիտական խմբի ղեկավար Ջիովանի Ռովիելոն, ով հանդիպումներ է ունեցել գիտական խմբի անդամների հետ, քննարկվել են հետագա անելիքները: Այցի ընթացքում Ջիովանի Ռովիելոն գիտական խմբի երիտասարդ անդամներին ներկայացրել է Ֆարմացիայի ինստիտուտի կողմից նոր ձեռքբերված Շրջանային դիքրոիզմի սպեկտրոսկոպիայի հետ աշխատանքային որոշ առանձնահատկություններ և իրականացվել են նախագծի շրջանակներում սինթեզված միացությունների ՇԴ և ՌՄ հետազոտություններ:

Հաշվետու ժամանակահատվածի չորրոդ եռամսյակում գիտական դրամաշնորհի գիտական ղեկավար Հայարփի Սիմոնյանը հրավիրվել է Գերմանիայի Դաշնության Սաարլանդի համալսարանի Կենսօրգանական քիմիայի ֆակուլտետ, պրոֆեսոր Յակոբ Կլաուսի լաբորատորիայում իրականացնելու թեմայի շրջանակներում սինթեզված միացությունների կենսաբանական որոշ հատկությունների և սինթետիկ այլ հնարավորությունների ուսումնասիրություններ: Այցի ընթացքում Հայարփի Սիմոնյանը ներկայացրել է ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական ուղղությունները: Պրոֆեսոր Յակոբ

Կլաուսի և իր գիտական խմբի հետ քննարկվել են համատեղ գիտական նախագծերի իրականացման հնարավորությունները:

Որոշեցին ՝ (միաձայն) հաստատել Հ. Սիմոնյանի ղեկավարությամբ իրականացվող «Թիոֆլավինանման կողմնային շղթաներով սինթետիկ ամինոթթուների ստացում և կիրառում» թեմայով Հայ-Իտալական դրամաշնորհի առաջին տարվա ընթացիկ հաշվետվությունը:

2. **Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ, կ.գ.թ. դոցենտ Անահիտ Հովհաննիսյանի՝ ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից Գ.00.07 «Միկրոբիոլոգիա. կենսատեխնոլոգիա» մասնագիտությամբ ատենախոսական աշխատանք ղեկավարելու թույլտվություն ստանալու հարցը:**

Լսեցին ՝գիտական խորհրդի քարտուղար Ա. Դադայանը, ով հաղորդեց այն մասին, որ համաձայն գործող կարգի թույլտվություն ստանալու համար պետք է ներկայացվի կազմակերպության ղեկավարի միջնորդությունը և թեկնածուի՝ համապատասխան գիտական բնագավառում առնվազն 30 տպագիր գիտական աշխատանքների ցուցակը, որոնցից առնվազն 5-ը՝ վերջին հինգ տարում: Ա. Դադայանը հավելեց, որ Անահիտ Հովհաննիսյանը հեղինակ է 39 գիտական հոդվածների և 2 ուսումնական ձեռնարկի, որոնցից 16 հոդվածը՝ վերջին 5 տարում:

Որոշեցին ՝ (միաձայն) դիմել ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանին՝ միջնորդելու ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին՝ Անահիտ Հովհաննիսյանին Գ.00.07 «Միկրոբիոլոգիա. կենսատեխնոլոգիա» մասնագիտությամբ ատենախոսական աշխատանք ղեկավարելու թույլտվություն ստանալու համար:

Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
բ.գ.թ, դոցենտ **Ա. Մկրտչյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝
բ.գ.թ., դոցենտ **Ա. Դադայան**